ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՆԴԵՍ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ճշտելու համար, թե քանի սերունդ առաջ է մեկ էլ այսպես մեծահանդես և այն էլ պետականորեն տոնախմբվել Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության փառահեղ տոնը, ուր Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր դասը ոչ թե նախաձեռնող, հյուրընկալող, այլ հյուրընկալվող է եղել, ինչպես այս տարի հունվարի 6-ին, թերևս հարկ կլինի թերթել պատմության արդեն իսկ խամրող էջերը: Անօրինակ այս տոնակատարությունը, սակայն, ի զարմանս ամենի, ոչ մի արձագանգի չարժանացավ զանգվածային լրատվամիջոցների կողմից, եթե չխոսենք հեռուստաթերթերից հնչած աղքատիկ ու ոչ այնքան լրջություն պարագրող, կցկտուր լուրերի մասին: «Ձայն բարրառոյ յանապատի», - գուցե այսպես որակենք այս լռությունը՝ փորձելով նաև հիշեցնել մեր ամենօրյա անցուդարձի երբեմն էլ ծուռ հայելին հանդիսացող լրատվամիջոցներին կամ հենց լրագրողներին, որ միայն այսօրով չչափեն մեր ժողովրդի ոգու վեհությունն ու կամքի ամրությունը, մեր վերանկախացյալ Հայրենիքի վերակենսավորվող ավանդույթները:

Սովորել ենք հանախ օրինակներ բերել հայոց պատմությունից, դասեր քաղելու փորձեր անել, բայց միայն այսքանը: Երբեք չենք կամեցել անցյալը դիտել այսօրվա չափանիշների տեսանկյունից և ընդհանրություններ գտնել: Ինչու չէ, թեավոր խոսք է՝ մարդ ոչ միայն հացով է ապրում, այլ նաև Աստծո խոսքով (*«Ոչ հացի միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»* /ՄԱՏԹ. Դ 4/): Այս նշանաբանով առաջնորդվեցին, պայքարեցին ու հավերժություն կերտեցին մեր նախնիները: Եվ եթե այսօր ևս մեզանից յուրաքանչյուրը նույն ոգով մոտենար այնքան գեղեցիկ տոնախմբությանը, համոզված եմ, որ անպայման սրտամոտ ու հոգեհարազատ ռեպորտաժներ, լրատվություններ, հաղորդագրություններ, գուցե նաև ակնարկներ գրվեին: Ինչևէ: Փորձենք ինքներս նկարագրել հանդիսությունը և, որպես համեստ հաղորդագրություն, ներկայացնել մեր ընթերցողին:

***

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը մեծահանդես արարողությամբ տոնվում է համայն քրիստոնյա աշխարհում: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, հավատարիմ հնավանդ սովորությանը, Հիսուս Քրիստոսի ծննդյան ու մկրտության տոնը նշում է հունվարի 6-ին: Այդ օրը Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում մատուցվում է Ս. Պատարագ:

Առավոտյան ժամը 11.00-ին Ս. Ծննդյան Պատարագ մատուցվեց նաև Մայր Տաճարում, որին ներկա էին մեծաթիվ հրավիրյալներ, հավատացյալ ժողովրդի հոծ բազմություն: Այն ամբողջությամբ եթեր հեռարձակվեց ՀՀ պետական հեռուստատեսությամբ:

Ցուրահատուկ շուքով նշվեց այս տարվա Ս. Ծննդյան տոնակատարությունը՝ պետականորեն, մեծահանդես:

Հունվարի 6-ի երեկոյան ժամը 20.00-ին Մայրաքաղաքի Հանրապետության հրապարակում տեղի ունեցավ Աստվածորդու հրաշափառ Սուրբ Ծննդյանը նվիրված տոնախմբություն, որի նախաձեռնողն էր Երևանի քաղաքապետարանը:

Քաղաքային իշխանությունների հրավերով միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաները՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի գլխավորությամբ:

Լեփ-լեցուն հրապարակում, նախքան հանդիսության սկսվելը, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Դպրանոցի սաները ներկա հավատացյալներին բաժանեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրատարակված աղոթաթերթիկներ և մեկական մոմեր, որոնց վետվետացող լույսերն առավել խորհրդավոր դարձրեցին այն:

Երեք ժամ տևած միջոցառման ընթացքում ներկայացվեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան և դրան հաջորդող պատմությունների վերաբերող բեմականացում, ապա հանդես եկան «Բարեկամություն» (գեղ. ղեկավար՝ Զորայր Մեհերաբյան) պարախումբը, ինչպես նաև տարբեր երգիչներ:

Հանդիսության հոգևոր բաժինն սկսվեց «Ավե Մարիա»-ի հոգեպարար երգեցողությամբ, որին հաջորդեցին Ավետարանի համապատասխան հատվածների ընթերցումը, օրվա խորհրդին առնչվող շարականների և տաղերի երգեցողությունը, Աստվածորդու ծննդյանն ու հետագա դեպքերին առնչվող իրադարձությունները խորհրդանշող բեմականացումը, որ տևեց մոտ 40 րոպե և զուգորդվեց գունա-լուսային բազմաթիվ երանգներով, որոնք հիշեցնում էին Բեթղեհեմյան ցուրտ երեկոն, մութ երկինքը, երկնակամարում փայլատակող աստղը, որ մոգերին առաջնորդեց դեպի նորածին Փրկիչը՝ երկրպագելու և խոնարհությամբ իրենց ընծաները մատուցելու Նրան:

Հիսուսի Սուրբ Ծննդյան դրվագները պատկերող հատվածի ներկայացումից հետո, դիմելով հրապարակում հավաքված հոծ բազմությանը, Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը նրանց փոխանցեց Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը: Սրբազան Հայրն ի մասնավորի ասաց.

«Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և մեր ժողովրդի հավատավոր զավակների, մենք բերում ենք քաղաքապետարանին մեր գնահատանքը և օրհնությունը այս անօրինակ միջոցառման համար: Սա վերաբերմունք է,

սա առավել քան վերաբերմունք է: Այս նշանակում է պետականորեն դարձ դեպի քրիստոնեական մեր հավատքը, դեպի մեր հայրերի սրբազան հավատքը: Իմ շրջումներն այս պահին, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, վառվում են օրհներգություն և փառաբանություն երգելու ցանկությամբ՝ մեր Հայր Աստծուն, հատկապես երբ ականատեսը եղանք այս գեղեցիկ բեմադրության, և տեսանք պատկերը մեր առջև տարածված մեր ժողովրդի հավատավոր այս պատմության:

Մենք մտովին հիմա վերադառնում ենք 2000 տարիներ ետ և պատկերացնում պարագաները մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան, թե ինչպես Նրա վկաները էին հովիվները և Իր ծնունդն օրհներգող հրեշտակաց դասը երկնքում, որոնց այսօր եկել են փոխարինելու հազարավոր հայորդիներն այս հրապարակում: Եվ անշուշտ մտուրին եկել է փոխարինելու գեղեցկորեն, լույսերով զարդարված, Քրիստոսի Սուրբ Ծնունդը ցնծությամբ տոնախմբող այս հրապարակը: Եվ ինչո՞ւ միայն այս հրապարակը: Այսօր Քրիստոսի Ծնունդն է տոնախմբում աշխարհը համայն: Համազգային մտքի հանճարով կերտված տաճարներն են եկել փոխարինելու անշուշտ այդ մտուրին: Մոգերին եկել են փոխարինելու պետության ղեկավարները: Ինչպե՞ս գոհություն և փառք չմատուցել Աստծուն և ինչպե՞ս չհիշակել Քրիստոսի այն խոսքը, որ ասում էր, թե «ես հաղթեցի աշխարհին»:

Արդարև, Հիսուս, չունենալով ո՛չ բանակ և ո՛չ զինվոր, ընդամենը 12 առաքյալներ, հաղթեց աշխարհին, հաղթեց Սուրբ Ծննդյան Իր բարի ավետիսով՝ «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» պատգամով, հաղթեց իր սիրով, հաղթեց իր խաչով, հաղթեց Իր արյան հեղմամբ: Եվ մեր ժողովուրդը, հասու հաղթանակի այս խորհրդին, 1700 տարիներ ապավինեց Քրիստոսին և հետևեց Նրան: Ապրեց Քրիստոսի հետ, ապրեց Քրիստոսով: Իմ աղոթքն ու մաղթանքն է այս գեղեցիկ, այս հիասքանչ օրվա, որ յուրաքանչյուր հայ օջախում, յուրաքանչյուր հայ անհատի հոգում ծնվի Քրիստոս, յուրաքանչյուր հայորդի իր սրտում բարձրացնի խանձարուրը Քրիստոսի, որպեսզի, ձերբազատված չար զգացումներից ու մտածումներից, Քրիստոս կարողանա բնակություն հաստատել մեր մեջ, որպեսզի այս նանապարհով և ընթացքով մենք կարողանանք կերտել մեր հայրենին, մեր հարազատ տունը և օջախը հայրենական, որպեսզի սերը տարածված լինի աշխարհում Հայոց, որպեսզի եղբայրությունը կապողը լինի մեզ միմյանց հետ:

Ահա, սիրելիներ, Քրիստոսի Սուրբ Ծննդյան այս պատգամն է, որ այսօր փոխանցվում է մեզ: Եվ այս սերը պետք է մենք կարողանանք դրոշակ դարձնել, որպեսզի հաղթանակից հաղթանակ քայլենք, որպեսզի հավատն ու հույսը դառնան մեր կյանքի անբաժան ուղեկիցները: Ուրեմն, փառք մեր 1700-ամյա Քրիստոսով ապրող ժողովրդին, հարգանք և խոնարհություն մեր հայրերին, որոնք պահել և պանծացրել են իրենց սրտերում քրիստոնեական լույս հավատքը:

Իմ խոսքի ավարտին, սիրելիներ, ես վերստին ցանկանում եմ

թարգմանը դառնալ մեր բոլորի երախտագետ զգացումների և շնորհակալություն հայտնել քաղաքապետարանին ու հայրենի պետական իշխանություններին, այս միջոցառման կազմակերպիչներին՝ հայցելով նրանց բարի, երջանիկ ստեղծագործական քուռն ներշնչանքներով յի տարի, հայցելով նաև մեր ժողովրդին երջանիկ, լուսաշող, հավատով լեցուն 1999 տարին, որը մեզ մի քայլ ևս ավելի մոտեցրեց պանծալի թվականին՝ 2001-ին, երբ մենք ազգովին պիտի տոնախմբենք 1700-ամյակը քրիստոնեական հավատի պետական կրոն հռչակման Հայաստան աշխարհում:

Շնորհք, սեր և խաղաղություն ընդ մեզ այժմ և հավիտյանս. ամեն»:

Ասենք նաև, որ հանդիսության գեղարվեստական դեկավարն Արա Երնջակյանն էր, իսկ գեղարվեստական ձևավորումն իրականացրել էր նկարիչ Եվգենի Սաֆորովը:

***

Հիրավի գեղեցիկ նախաձեռնություն էր իր տեսակի մեջ յուրօրինակ այդ հանդիսությունը, որի շնորհիվ ոչ միայն քաղաքամայր Երևանից, այլև շրջակա քաղաքներից և գյուղերից ժամանած հավատավոր հայորդիները մեկ անգամ ևս այսպես յուրովի «մասնակից» եղան մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան հետ առնչվող իրադարձություններին, որոնք արդեն 2000 տարի առաջնորդում են քրիստոնյա աշխարհը իրական լույսի ու հավատի ճանապարհով, հեռու պահում տարբեր փորձություններից, ինչու չէ, նաև ուսուցանում ճշմարիտ ապրելու գաղտնիքը:

Մոգերի ու հովիվների ընծայաբերումը շարունակվում է առ այսօր, շարունակվում է նորովի:

Հայ ժողովուրդը դարեր շարունակ Աստծուն ընծայեց իր ունեցածի լավագույնը, իր կյանքը, որպես կենդանի պատարագ, դրեց հավատի զոհասեղանին, մոխիրներից փյունիկ թռչնի պես հարություն առավ և, հակառակ իր ճանապարհին ծառացած չարիքներին ու անարդարություններին, լույս հավատով լուսավորեց իր հոգին, ստեղծեց Աստվածաշնչյան համամարդկային գաղափարներով միաշաղախված մշակույթ, կանգնեցրեց հոյակերտ տաճարներ և նրանցում արարեց փառավոր գրականություն ու գեղարվեստի հրաշալի արժեքներ:

Մենք՝ նորօրյա «մոգերն» ու «հովիվները» Աստծու, այսօր նորովի ենք ընդառաջ գնում Խաղաղության Իշխանի հրաշափառ Սուրբ Ծնունդն ավետող աստղի լույսին՝ մեր երգի ձայնը միախառնելով մեր բարեպաշտ հայրերի ձայնին, ցնծությամբ կրկնելով շարականի տողերը.

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ,
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի»...

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ